ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
N ՀԽԴՄ- 01/25

Ք.Եղեգնաձոր 25 հուլիսի
2025

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմը, ի դեմս Գլխավոր քարտուղար Ա.Հարությունյանի, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ (Պետական մարմին), մի կողմից և Եղեգնաձորի Մշակույթի կենտրոն ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Մ.Սիմոնյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ (Կազմակերպություն), մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով ««Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում վերաբաշխում,փոփոխություններ և լրացումներ,ՀՀ կառավարության 2024թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 2060-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության հուլիսի 17-ի թիվ 980-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պետական մարմինը պարտավորվում է ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի 01.08.01.07. ՝ «Տարածքային զրգացում» ծրագրի (ծրագրի դասիչ՝ 1212) «Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման» (միջոցառման դասիչ՝ 12025) միջոցառման իրականացման համար սույն պայմանագրի 2.1. կետում նշված միջոցները հատկացնել Կազմակերպությանը՝ ՀՀ Վայոց ձորի մարզի «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի հիմնախնդիրների լուծման նպատակով::

2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրով կատարված ծառայության ընդհանուր գինը կազմում է 3166.4 (երեք միլիոն մեկ հարյուր վաթսունվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ,այդ թվում իննը ամիս ՝ 2216.5,տարի՝ 3166.4 հազ. ՀՀ դրամ:

2.2 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Պետական մարմինը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է Կազմակերպության գանձապետական հաշվին՝ համաձայն հավելվածի:

3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.2 Կազմակերպությունը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պետական մարմնի ներկայացուցչի հնարավորությունը:

3.3 Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի թիվ 104-Ն հրամանի և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններին առընչվող այլ իրավական ակտերի:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 25-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վայոց Ձորի մարզպետի աշխատակազմ
Ք.Եղեգնաձոր Շահումյան 5
ՀՀ ֆն գործառնական վարչություն
ՀՀ 900351001871

ՀՎՀՀ 08918507

_____ Ա.ՀԱՄՐԻԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
Եղեգնաձորի մշակույթի կենտրոն ՊՈԱԿ
Ք.Եղեգնաձոր Շահումյան 9
ՀՀ ֆն գործառնական վարչություն
ՀՀ 900358000306

ՀՎՀՀ 08900537

_____ Մ.ՍԻՄՈՆՅԱՆ